շնորհաց առատաձիր գեղման խորհրդաւոր ժամին. յիշելով միանգամայն, որ 1600-րդ տարին է բոլորում այն յաւերժայիշատակ օրից, երբ երկնային ցուցմամբ հրաշակերտ տաճարի լուսեղէն կամարները ձգուեցան, հովանի և անքոյթ նաւահանգիստ լինելու Հայութեան՝ դարերի յորձանքի դէմ։

Ս. Միւռոնի օրհնութեան առթիւ Մ. Աթոռ դիմող ուխտաւորներին պատշաճաւոր ընդունելութիւն ցոյց տալու և այս նկատմամբ կարևոր եղած նախապատրաստութիւններն այժմեանից հոգալու համար Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց սրբատառ կոնդակով մի յանձնաժողով կարգել, որի անդամներն են՝ Գեր. Յուսիկ եպիսկոպոս, Տ. Մեսրոպ, Տ. Կարապետ, Տ. Յուսիկ և Տ. Կորիւն վարդապետներ, Տ. Արտակ աբեղայ և Շնորհ. Մկրտիչ սարկաւագ։ Յանձնաժողովին իրաւունք է տուած որոշ նորոգութիւններ և այլ ծախքեր անել, ինչպէս և, առանձին ժապաւինեալ մատեանի մէջ արձանագրելով՝ ժողովել բարեպաշտ ժողովրդեան նուէրները։ Յանձնաժողովը պարտք կհամարէ յայտնելու ի հարկին վաղօրօք, թէ ինչ միջոցներ է ձեռք առել ուխտաւորների դիւրութեան և հանդէսին վերաբերեալ հաղորդակցութեանց համար։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ՏՓԽԻՍ.

Աղիս Վ.Հ. Հայրապետը մարտի 13-ին, հինգշաբթի, Երևանի վերայով ուղևորուեց դէպի Տփխիս։ Նորին Ս. Օծու-

թեան մինչև Երևան և այնտեղից Ղարխուն կայարանը ուղեկցեցին Դեր. Տ. Արիստակէս, Տ. Մակար և Տ. Ղևոնդ եպիսկոպոսները և Բարձր. Տ. Աշոտ, Տ. Մեսրոպ և Տ. Եղիշէ վարդապետները. իսկ ամբողջ ճանապարհորդութեան միջոցին ուղեկցում էին դիւանապետ Տ. Կ-րիէն վարդապետ և Տ. Ներսէս աբեղայ։ 14-ին երեկոյեան Նորին Ս. Օծութիւնը ժամանեց Աղէքսանդրապոլ, ուր կայարանում ընդառաջ էին եկել տեղւոյն գաւառապետը և փոխանորդ Տ. Տիրայր վարդապետ քահանայական դասի հետ։ Յաջորդ օրը, շաբաթ երեկոյեան՝ Նորին Ս. Օծութիւնը բարեհաճեց իջնել Ս. Աստուածածին եկեղեցի և կիւրակէ ս. Փրկիչ եկեղեցում ներկայ լինել ս. պատարագին, որից յետոյ հոգեհանգիստ կատարուեց տեղւոյն աղքատախնամ գործի բարերարների յիշատակին։ Այդ առթիւ Նորին Վեհափառութիւնը պարզ ոճով խուռն բազմութեան բացատրեց այն մեծ նշանակութիւնը, որ տալիս է Փրկիչը ողորմածութեան, և յորդորեց հաւատացեալ ժողովրդեան հետևելու աւետարանի այդ հիմնական պատուէրին։ Նորին Ս. Օծութիւնն ապա 17-ին ցերեկուայ գնացքով մեկնեց դէպի Տփխիս։ Այստեղ կայարանում ընդառաջ էին եկել Սրբազան առաջնորդը, Տ. Յովհաննէս վարդապետի ու մի քանի քահանաների և պատուաւոր քաղաքացիների հետ. իսկ քահանայական ամբողջ դասը և Ներսիսեան դպրանոցի ուսուցչական խումբը սպասում էր առաջնորդարանի դարպասի առաջ, ուր խռնուած հանդիսատես ժողովուրդը Նորին Վեհափառութեան օրհնութիւնն ընդունեց կեցցէներով։

Յաջորդ օրերում ներկայացան Վեհ. Հայրապետին Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը և ուրիշ պատուաւոր քաղաքացիներ։ Հինգշաբթի օրը, մայիսի 20-ին, Նորին Ս. Օծութիւնն այցելեց Կովկասի կառավարչապետի օգնական գեներալ լէյտենանտ Ֆրէյդէին և ընդունեց նորա փոխ այցելութիւնը մայիսի 23-ին։ Մայիսի 24-ին Նորին Ս. Օծութիւնը բարեհաճեց այցելել յայտնի մեծատուն և բարեգործ պ. Աղ. Մանթաշևանին, որ տառապում է ծանր հիւանդութեամբ։ Այստեղ ի ներկայութեան մի քանի մտերիմ բարեկամների

պ. Մանթաշեան ցանկութիւն յայտնեց իւր վերայ վերցնելու ս. Էջմիածնի Մ. Տաճարի վերանորոգութեան ամբողջ ծախքը, և Վեհափառ Հայրապետը հաճութեամբ ու օրհնութեամբ ընդունեց այդ որդիական փառաւոր նուիրաբերութիւնը։ Իսկ ամսի 27-ին Նորին Վեհափառութիւնը մեկնեց Տփխիսից և յաջորդ օրը ողջամբ ժամանեց Ս. Էջմիածին։ Ղարիսուն կայարանում ընդառաջ էին եկել Գեր. Տ. Մակար և Տ. Ղեոնդ եպիսկոպոսները և Բարձր Տ. Աշոտ, Տ. Մխիթար և Տ. Յուսիկ վարդապետներ։

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետը ս. Յարութեան տօնի առթիւ ընդունած շնորհաւորութեանց համար Իւր Հայրական շնորհակալիքն է յայտնում և Հայրապետական օրհնութիւնը բաշխում բոլոր այն եկեղեցական և աշխարհական հոգևոր գաւակաց, որոնք չէին մոռացել իրենց ջերմեռանդ զգացմանց հաւատիքը ներկայացնել Հայաստանեայց ս. եկեղեցւոյ Ծերունազարդ Դիտապետին։

Վեհափառ Հայրապետը՝ տեղեկանալով որ ամսոյս 20-ին, Աշխարհամատեան կիւրակէ օրը, քահանայապետութեան օծումն պէտք է ընդունէ Սուրմ Կիլիկիոյ Նորընտիր Կաթուղիկոս Տ. Սահակ, բարեհաճեց հեռագրաւ պատուիրել